Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ/4139/02/23
2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«01» փետրվարի 2024թ. ք. Երևան

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գ. Հակոբյանս, ուսումնասիրելով թիվ ԱՐԱԴ/4139/02/23 քաղաքացիական գործով ըստ «Յուքոմ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հայցի ընդդեմ Մոնիկա Խաչատրյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դ. Սարգսյանի կողմից 10.01.2024 թվականին կայացված «Քաղաքացիական գործը Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին» որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Ընկերությունը հայց է ներկայացրել Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Մոնիկա Խաչատրյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին:

Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Մարգարյանի 25.09.2023 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և որոշվել է գործը քննել պարզեցված վարույթի կարգով, ու որպես կայացվելիք եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր է նշվել 09.01.2024 թվականը:

Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Մարգարյանը 11.12.2023 թվականին որոշում է կայացրել վերը նշված «քաղաքացիական գործը պարզեցված վարույթի կարգով քննելու հարցը դադարեցնելու և տարածքային ընդդատության կարգով գործի հետագա ընթացքը լուծելու համար այն Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ուղարկելու մասին»՝ պատճառաբանելով, որ

- «*պատասխանող Մոնիկա Խաչատրյանը բնակվում է ՀՀ Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, գ. Մալիշկա, Կենտրոնական փողոց 45, ինչը հաստատվում է պատասխանողի 29.11.2023թ. դատարան ներկայացված հետադարձ ծանուցումով*»,

- «*պատասխանողը չի հանդիսանում ՀՀ Արագածոտնի մարզի բնակիչ, ինչպիսի հանգամանքը հայցադիմումը վարույթ ընդունելու պահին հայտնի է եղել, սակայն դատարանը տարածքային ընդդատության կանոնների խախտմամբ գործն ընդունել է վարույթ*»:

Գործը 03.01.2024 թվականին ստացվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ու բաշխվել նույն դատարանի դատավոր Դ. Սարգսյանին:

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դ. Սարգսյանը, համաձայն չլինելով գործի տարածքային ընդդատությանը, 10.01.2024 թվականին որոշում է կայացրել թիվ ԱՐԱԴ/4139/02/23 քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին այն պատճառաբանությամբ, որ՝

- «*գործում բացակայում է Պատասխանող Մոնիկա Սայաթի Խաչատրյանի առարկությունը գործի քննությունը ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննելու մասին, ավելին օրենսդիրը դատարանի համար սահմանել է պարտականություն, գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին որոշում կայացնել բոլոր այն դեպքերում, երբ գործը քննելիս պարզվում է, որ այն վարույթ է ընդունվել բացառիկ տարածքային ընդդատությամբ կամ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով սահմանված նորմերի խախտմամբ*»,

- «*Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, գործը ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը հանձնելու մասին որոշում կայացնելու պահին, չի ունեցել տեղեկություն, թե արդյո՞ք Պատասխանող Մոնիկա Սայաթի Խաչատրյանը առարկում է գործի քննությունը տվյալ դատարանում շարունակելուն, թե ոչ*»:

Թիվ ԱՐԱԴ/4139/02/23 քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանում ստացվել է 26.01.2024 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն

վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գ. Հակոբյանս, լուծելով թիվ ԱՐԱԴ/4139/02/23 քաղաքացիական գործի տարածքային ընդդատության մասին վեճը, գտնում եմ, որ սույն վեճը լուծելու պահի դրությամբ նշված քաղաքացիական գործով իրավասու դատարանը Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն է հետևյալ պատճառաբանությամբ:

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ նույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, ***եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ***:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կայացվում է որոշում:

Վերը նշված նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չլինելու դեպքում հայցը որպես կանոն ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան:

Դրա հետ մեկտեղ օրենսդիրը, չբացառելով այն դեպքերը, երբ գործը կարող է վարույթ ընդունված լինել նույն օրենսգրքի նաև 21-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ, համապատասխան իրավակարգավորում է նախատեսել այն մասին, որ այդ դեպքում դատարանը որոշում է կայացնում գործն այն

դատարանի քննությանը հանձնելու մասին, որին նույն օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով ընդդատյա է տվյալ քաղաքացիական գործը: Ընդ որում, նման որոշում կայացնելու համար անհրաժեշտ պայման է նաև մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը պատասխանողի կողմից գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ առարկություն ներկայացված լինելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանները պարզեցված վարույթն իրականացնում են նույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ գլուխ] դրույթներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը գործը պարզեցված վարույթի կարգով քննելու հարցը լուծում է հայցադիմումը վարույթ ընդունելու որոշմամբ: Նույն օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով նախատեսված դեպքերում դատարանը պարզեցված վարույթ կիրառում է մինչև նախնական դատական նիստի ավարտն առանձին ակտի ձևով կայացված որոշմամբ, իսկ 4-րդ կետով նախատեսված դեպքում՝ հայցադիմումի պատասխանն ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում առանձին ակտի ձևով կայացված որոշմամբ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշման հետ մեկտեղ գործին մասնակցող անձին ուղարկվում է գրավոր պարզաբանում՝ դատարանի որոշումը ստանալուց հետո կատարման ենթակա գործողությունների, դրանց կատարման ժամկետների և չկատարելու հետևանքների մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձանց միջնորդությունները, ինչպես նաև նրանց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը հիմնավորող ապացույցները կարող են ներկայացվել պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ գլխում ներառված, այդ թվում նաև՝ վերը նշած իրավական նորմերը ենթարկելով համալիր վերլուծության, դրանք համադրելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավակարգավորման հետ՝ նախ անհրաժեշտ եմ համարում արձանագրել, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ գլխով քաղաքացիական գործերի ընդդատության վերաբերյալ հատուկ կանոն նախատեսված չէ, որի պայմաններում դատարանները պարզեցված վարույթ իրականացնելիս ևս պարտավոր են պահպանել նույն օրենսգրքի 3-րդ գլխով նախատեսված գործերի ենթակայության և ընդդատության կանոնները, այդ թվում՝ նախատեսված նույն գլխում ներառված 21-րդ ու 25-րդ հոդվածներով: Ընդ որում, նշված կանոնները դատարանները պարտավոր են պահպանել անկախ նրանից՝ գործը

պարզեցված վարույթի կարգով քննելու հարցը լուծվել է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ, թե՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո՝ մինչև նախնական դատական նիստի ավարտը:

Անդրադառնալով այն հարցին, թե ե՞րբ կարող է հաստատված համարվել պատասխանողի առարկության առկայության փաստը գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ՝ անհրաժեշտ եմ համարում արձանագրել, որ դա կարող է հաստատվել ինչպես պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումը պատասխանողին ուղարկելու արդյունքում այն նրա կողմից ստացվելուց հետո գրավոր առարկություն ներկայացվելու, այնպես էլ նախնական դատական նիստի ընթացքում այդ մասին հայտարարելու արդյունքում:

Սույն գործում առկա փաստերի վերլուծությունից բխում է, որ Ընկերության կողմից ներկայացված հայցի հիման վրա հարուցված գործը վարույթ է ընդունվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ընդդատության կանոնի խախտմամբ, որպիսի եզրահանգումը պայմանավորված է նրանով, որ հայցադիմումը դատարան ներկայացնելու օրվա դրությամբ պատասխանող Մոնիկա Խաչատրյանը հաշվառված է եղել ոչ թե Արագածոտնի մարզի Կաքավաձոր գյուղի 12-րդ փողոցի թիվ 11 տուն հասցեում, այլ՝ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի Մալիշկա գյուղի Կենտրոնական փողոցի թիվ 45-ում (հիմք՝ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ղեկավարի 25.10.2023 թվականի թիվ 3551 տեղեկանքը (գ. թ. 35), ՀՀ ընտրողների ռեգիստրից կատարված քաղվածքը (գ. թ. 39)), որպիսի հասցեն ներառված է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Միաժամանակ արձանագրում եմ, որ սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Մարգարյանը 11.12.2023 թվականին որոշում է կայացրել թիվ ԱՐԱԴ/4139/02/23 քաղաքացիական գործը Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին հանձնելու մասին՝ չպարզելով, թե արդյո՞ք պատասխանող Մոնիկա Խաչատրյանն առարկում է տվյալ գործի քննությունը Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում շարունակելուն: Դրա վերաբերյալ պատճառաբանությունը նաև բացակայում է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Մարգարյանի կողմից 11.12.2023 թվականին կայացված որոշման մեջ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ սույն վեճը լուծելու պահի դրությամբ թիվ ԱՐԱԴ/4139/02/23 քաղաքացիական գործով իրավասու դատարան է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, որի պայմաններում գործն ընդդատյա է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ԱՐԱԴ/4139/02/23 քաղաքացիական գործն ընդդատյա է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

2. Սույն որոշումը և թիվ ԱՐԱԴ/4139/02/23 քաղաքացիական գործի նյութերն ուղարկել Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

3. Որոշման օրինակն ուղարկել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ՀՀ վճռաբեկ դատարանի
քաղաքացիական պալատի նախագահ **ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ**